

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

**2021թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**


Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10


հազ. դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	85,646	38,938
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		65,233	100,814
Ոչ նյութական ակտիվներ		49	225
Հետաձգված հարկային ակտիվներ	11	11,093	15,566
Ներդրումներ		108,174	108,174
Ոչ ընթացիկ ակտիվներ		270,195	263,717
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	12	569,263	597,432
Կանխավճարներ		13,812	15,176
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	655,080	342,964
Ընթացիկ ակտիվներ		1,238,155	955,572
Ընդամենը ակտիվներ		1,508,350	1,219,289
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	14	50,000	50,000
Զբաղիված շահույթ		781,132	614,664
Ընդամենը սեփական կապիտալ		831,132	664,664
Պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ		32,797	68,356
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	-	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ		32,797	68,356
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	15	596,575	442,392
Վարձակալության գծով պարտավորություններ		47,846	43,877
Ընթացիկ պարտավորություններ		644,421	486,269
Ընդամենը պարտավորություններ		677,218	554,625
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,508,350	1,219,289

հազ. դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Հատույթ	5	1,356,269	1,175,799
Ուղղակի ծախսեր	6	(896,245)	(794,552)
Համախառն շահույթ		460,024	381,247
Այլ եկամուտ		12,500	925
Վարչական ծախսեր		(251,707)	(193,510)
Գործառնական գործունեության արդյունքներ		220,817	188,662
Ֆինանսական (ծախսեր)	7	(5,201)	(18,663)
Չուտ ֆինանսական (ծախսեր)		(5,201)	(18,663)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		215,616	169,999
Շահութահարկի գծով ծախս	8	(49,148)	(39,590)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		166,468	130,409

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. ապրիլի 28-ին և ստորագրվել են վերջինիս անունից:


 Տիգրան Գառնարյան
 Տնօրեն




 Լիլիթ Մակյան
 Գլխավոր հաշվապահ

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	50,000	484,255	534,255
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար			
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	130,409	130,409
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	50,000	614,664	664,664
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	50,000	614,664	664,664
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար			
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	166,468	166,468
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	50,000	781,132	831,132

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,666,874	1,352,798
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(623,282)	(642,111)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(198,739)	(162,862)
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(403,533)	(405,986)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը	441,320	141,839
Վճարված շահութահարկ	(30,813)	(15,889)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	410,507	125,950
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	15,000	-
Հիմնական միջոցների ր ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(87,663)	(1,145)
Ստացված տոկոսներ	40,479	10,251
Փոխառությունների տրամադրում/ստացում	-	-
Ներդրումային գործունեության համար զուտ դրամական հոսքեր	(32,184)	9,106
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր փոխառություններից	-	-
Փոխառությունների մարում	-	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(56,030)	(53,696)
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(56,030)	(53,696)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	322,293	81,360
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	342,964	255,124
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(10,177)	6,480
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (Ծնթզ. 13)	655,080	342,964

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը («Բիզնես») գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում 1997թ. մարտին: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն ուներ 64 աշխատակից:

Բիզնեսի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան փ. 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ:

Բիզնեսը աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիա է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից և ծառայություններ է մատուցում ձեռնարկատիրական և բանկային ոլորտի հաճախորդներին:

Հայկական և Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններին Բիզնեսը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- Աուդիտորական ծառայություններ,
- Հարկային և իրավաբանական խորհրդատվություն,
- Խորհրդատվական ծառայություններ:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն («Բիզնես») իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Բիզնեսի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բիզնեսի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այսպես գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Զափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Բիզնեսի ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 5-ում՝ հասույթի ճանաչում. արդյոք ծառայություններից ստացվող հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, թե ժամանակի որոշակի պահին:

Իրական արժեքի չափում

Բիզնեսի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի չափում թե՛ ֆինանսական և թե՛ ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Բիզնեսը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն Բիզնեսը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 16-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և վերջիններիս վերաբերող մանրամասն տեղեկատվությունը:

- (ա) Ֆինանսական եկամուտ և ծախսեր
- (բ) Արտարժույթ
- (գ) Աշխատակիցների հատուցումներ
- (դ) Շահութահարկ
- (ե) Հիմնական միջոցներ
- (զ) Ֆինանսական գործիքներ
- (է) Արժեզրկում
- (ը) Պահուստներ

(ա) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեզրկելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները՝ ներառյալ առևտրական դերիտորական պարտքերը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթի, թե զուտ վնասի:

(բ) Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստը իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված տոկոսների և վնասումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերահաշվարկից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(գ) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Բիզնեսն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(դ) Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի ակնկալվող գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Բիզնեսը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ հարկերի, տուգանքների, ուշացված վճարումների համար տոկոսների գանձման հնարավորությունը: Բիզնեսը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Բիզնեսին փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է գնահատականը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Բիզնեսն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Բիզնեսը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ հարկային օգուտը կիրացվի:

(ե) Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Մեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են գուտ հիմունքով «Այլ եկամուտ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Բիզնեսը կստանա այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտներ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- | | |
|---|----------|
| – համակարգչային տեխնիկա | 3 տարի |
| – սարքավորումներ | 5-8 տարի |
| – տնտեսական գույք և վարձակալված միջոցների բարելավումներ | 5-8 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(զ) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումն իրականացվում է դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումն իրականացվում է, երբ Բիզնեսը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումը կատարվում է գործարքի գնով:

(ii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Բիզնեսը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով:

Բիզնեսն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերից: Բիզնեսը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բիզնեսը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բիզնեսը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշը չի բավարարվում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Բիզնեսը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Բիզնեսն ապահանջում է ֆինանսական պարտավորություններ, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապահանջմանը, Բիզնեսը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապահանջման, այսինքն, Բիզնեսը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Բիզնեսն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բիզնեսը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

(iii) Ապահանջում

Ֆինանսական ակտիվներ

Բիզնեսն ապահանջում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Բիզնեսը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Բիզնեսն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապահանջվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բիզնեսն ապանանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Բիզնեսը նաև ապանանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապանանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iv) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Բիզնեսն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(է) Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ և պայմանագրային ակտիվներ

Բիզնեսը ճանաչում է պահուստ ակնկալվող պարտաքային կորուստների գծով՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և
- պայմանագրային ակտիվների համար:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով:

Երբ Բիզնեսը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի՝ առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Բիզնեսի նախկին փորձի և պարտքային որակի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Բիզնեսը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ժամկետանց է ավելի քան 30 օր:

Բիզնեսը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի իր վարկային պարտավորությունները, եթե Բիզնեսը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում է պարտագանցման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է պարտագանգման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Բիզնեսը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական հոսքերի միջև, որոնք Բիզնեսը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք Բիզնեսն ակնկալում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բիզնեսը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտագանգումը կամ վճարման ուշացումն ավելի քան 90 օր,
- Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Բիզնեսը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Բիզնեսն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Բիզնեսը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Բիզնեսի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ը) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բիզնեսը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղջման միջև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը: Չեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2021թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բիզնեսը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Բիզնեսը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Բիզնեսը որոշել է, որ առկա բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

(բ) Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և շահագործումից հանելու պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և շահագործումից հանելու պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Բոլոր մյուս գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործանական առաջարկներ 2-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Բիզնեսը հասույթը հիմնականում ստանում է հաճախորդներին մատուցվող ծառայություններից (տես Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Հասույթ հաճախորդներին հետ պայմանագրերից	1,356,269	1,175,799
Ընդամենը հասույթ	1,356,269	1,175,799

(բ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ ծառայություններից և հասույթի ճանաչման ժամկետների:

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Հասույթի ճանաչման ժամկետներ		
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	1,356,269	1,175,799
Հասույթ հաճախորդներին հետ պայմանագրերից	1,356,269	1,175,799

(գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների վերաբերյալ:

հազ. դրամ	Ծնթց.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
«Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր	12	73,014	105,789
Պայմանագրի գծով ակտիվներ		111,904	77,491

Պայմանագրի գծով ակտիվները հիմնականում վերաբերում են այն աշխատանքների դիմաց հատուցում ստանալու Բիզնեսի իրավունքներին, որոնք կատարվել են, սակայն որոնց համար հաշիվ չի ներկայացվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Պայմանագրի գծով ակտիվները փոխանցվում են դեբիտորական պարտքերի կազմ, երբ իրավունքները դառնում են ոչ պայմանական, որը սովորաբար տեղի է ունենում, երբ Բիզնեսը հաշիվ է ներկայացնում հաճախորդին:

Պայմանագրի գծով պարտավորությունները հիմնականում վերաբերում են հաճախորդներից ստացված կանխավճարներին:

6. Ուղղակի ծախսեր

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ	765,948	667,305
Գործուղումները, ներկայացուցչական ծախսեր, համաժողովներ և դասընթացներ	31,823	12,763
Մասնագիտական ծառայություններ	49,000	69,118
Մաշվածություն	30,171	33,646
Այլ ծախսեր	19,303	11,720
	896,245	794,552

7. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Ճահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ	45,958	29,887
Չուտ օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերություններից	(39,948)	(35,404)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(11,211)	(13,146)
Ֆինանսական (ծախս)	(5,201)	(18,663)

8. Ճահութահարկի գծով ծախս

Բիզնեսը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար գործող 18% դրույքաչափով:

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	44,676	28,901
Նախորդ տարվա հարկի գծով ճշգրտում		
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	4,472	10,689
Ընդամենը շահութահարկ և ծախս	49,148	39,590

9. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Սարքավորումներ և համակարգիչներ	Տնտեսական գույք և վարձակալված միջոցների բարելավումներ	Փոխադրա- միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	123,326	33,092	49,543	205,961
Ավելացումներ	819	113	-	932
Շահագործման չհանձնված	-	-	-	-
Օտարումներ/դուրսգրումներ	(208)	(1,490)	-	(1,698)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	123,937	31,715	49,543	205,195
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	123,937	31,715	49,543	205,195
Ավելացումներ	31,420	562	50,000	81,982
Շահագործման չհանձնված	-	-	-	-
Օտարումներ/դուրսգրումներ	(3,509)	(108)	(38,515)	(42,132)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	151,848	32,169	61,028	245,045
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ				
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	109,187	24,766	16,654	150,607
Տարվա մաշվածություն	5,324	2,220	9,803	17,347
Օտարումներ/դուրսգրումներ	(208)	(1,490)	-	(1,698)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	114,303	25,496	26,457	166,256
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	114,303	25,496	26,457	166,256
Տարվա մաշվածություն	6,531	2,277	26,466	35,274
Օտարումներ/դուրսգրումներ	(3,509)	(108)	(38,515)	(42,132)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	117,325	27,665	14,408	159,398
Հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2020թ.	14,139	8,326	32,889	55,354
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	9,634	6,219	23,086	38,939
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	34,523	4,504	46,620	85,647

6,978 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2020թ-ին՝ 10,454 հազար դրամ) հաշվառվել է ուղղակի գործառնական ծախսերում, իսկ 28,296 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2020թ-ին՝ 6,893 հազար դրամ)՝ վարչական ծախսերում:

10. Ոչ նյութական ակտիվներ

	Սկզբնական արժեք	Մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	8,847	8,152	695
Փոփոխություն տարվա ընթացքում	204	675	(471)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	9,051	8,827	224
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	9,051	8,827	224
Փոփոխություն տարվա ընթացքում		175	(175)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	9,051	9,002	49

11. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ծանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ գումար	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Հիմնական միջոցներ	865	1,748	(894)	(296)	(29)	1,452
Ոչ նյութական ակտիվներ	-	9	-	-	-	9
Վարձակալության գծով պարտավորություններ	14,516	20,202	(11,742)	(18,147)	2,774	2,055
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	-	(90,136)	(61,845)	(90,136)	(61,845)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	98,484	73,895	-	-	98,484	73,895
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	113,865	95,854	(102,772)	(80,288)	11,093	15,566

12. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Առևտրական դեբիտորական պարտքերի	73,014	105,789
Տրամադրված փոխառություններ	384,345	414,152
Պայմանագրի գծով ակտիվներ	111,904	77,491
	569,263	597,432

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժույթային ռիսկերին Բիզնեսի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 16-ում:

13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Կանխիկը դրամարկղում	142	112
Բանկային հաշիվների մնացորդներ	654,938	342,852
Ցպահանջ ավանդներ	-	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	655,080	342,964
Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	655,080	342,964

Պարտքային և արժույթային ռիսկերին Բիզնեսի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 16-ում:

14. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

	Սովորական բաժնետոմսեր	
	2021թ.	2020թ.
Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ		
Հայտարարված բաժնետոմսեր	1,000	1,000
Անվանական արժեք	50,000 դրամ	50,000 դրամ
Թողարկված առ 1 հունվարի	1,000	1,000
Թողարկված առ 31 դեկտեմբերի, ամբողջովին վճարված	1,000	1,000

Սովորական բաժնետոմսեր

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի հայտարարված, թողարկված և ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,000 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 50,000 դրամ արժեքով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին իրավունք ունեն ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բիզնեսի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

15. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	117,681	124,829
Հաշվեգրված ծախսեր և այլ կրեդիտորական պարտքեր	427,865	285,198
Այլ վճարվելիք հարկեր	51,029	32,365
	596,575	442,392

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված իրացվելիության և արժույթային ռիսկերին Բիզնեսի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 16-ում:

16. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Բիզնեսը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Բիզնեսի ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Բիզնեսի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման Բիզնեսի մոտեցումը: Այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Տնօրենը պատասխանատվություն է կրում Բիզնեսի ռիսկերի կառավարման հիմունքների ձևավորման և վերահսկողության համար: Տնօրենը կազմավորել է Ռիսկերի կառավարման խումբ, որը պատասխանատու է ռիսկերի կառավարման քաղաքականության մշակման և վերահսկողության համար: Բիզնեսը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենին իր գործունեության վերաբերյալ:

Բիզնեսի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բիզնեսը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Բիզնեսի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Բիզնեսը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերերի և պարտականությունների մասին:

(i) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել Բիզնեսի նկատմամբ ստանձնած իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և այլ ներդրումների գծով:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածություն սահմանափակելու համար Բիզնեսը վճարման առավելագույն ժամկետ է սահմանել մեկ ամիսը բոլոր հաճախորդների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում կորպորատիվ հաճախորդների համար՝ հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ

Բիզնեսը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք դասում է պարտքային ռիսկի համապատասխան դասին՝ հիմք ընդունելով այն տվյալները, որոնք օգտագործվում են վնասի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում առկա տեղեկատվություն) և կիրառելով պարտքի վերաբերյալ փորձագետների դատողությունները:

Պարտքային ռիսկի դասերը որոշվում են կիրառելով որակական և քանակական գործոնները, որոնք ծառայում են որպես պարտագանգման ռիսկի հայտանիշ և համաձայնեցված են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանիշների սահմանումների հետ, ինչպիսիք «Moody's Investor Services»-ն է:

Բիզնեսի գնահատմամբ բոլոր առևտրական և այլ դեբիտորական պարտքեր համարվում են ցածր ռիսկ ունեցող: Ելնելով էականության նկատառումներից և հաշվի առնելով դեբիտորական պարտքերի կարճ ժամկետայնությունը՝ սպասվող պարտքային վնաս Բիզնեսի կողմից չի ճանաչվել:

Բիզնեսը ցածր ռիսկը սահմանում է հետևյալ կերպ.

Ցածր ռիսկ – հաճախորդն ունի բավարար հնարավորություններ դրամական միջոցների հետ կապված պայմանագրով նախատեսված իր պարտականությունները մոտակա ժամկետում կատարելու համար, և քիչ հավանական է, որ տնտեսական և գործարար պայմանների բացասական փոփոխությունները երկարաժամկետ հեռանկարում կարող են նվազեցնել հաճախորդի դրամական միջոցների հետ կապված պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու հնարավորությունը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բիզնեսն ուներ 655,080 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (2020թ-ին՝ 342,964 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավել ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են վստահելի հայկական բանկերում, և Բիզնեսը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Բիզնեսի գնահատմամբ ընթացիկ հաշվի գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում պայմանավորված վերջինիս կարճաժամկետ բնույթով:

(ii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն ենթադրում է, որ Բիզնեսը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Բիզնեսի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Բիզնեսի համբավը վտանգելու:

Բիզնեսն ապահովում է բավարար միջոցներ իր ֆինանսական գործունեությունն իրականացնելու համար և կանոնավոր կերպով վերահսկում է անհրաժեշտ և բավարար դրամական միջոցների և դրանց համարժեքների առկայությունը: Բիզնեսն ապահովում է ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում կամ կազմակերպում է ազատ ֆինանսական միջոցների նպատակահարմար ներդրում:

2021թ.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	117,681	117,681	117,681	-
	117,681	117,681	117,681	-

2020թ.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	124,829	124,829	124,829	-
	124,829	124,829	124,829	-

(iii) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բիզնեսի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկի նկատմամբ Բիզնեսի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, գումարների և փոխառությունների հետ: Այս գործարքները հիմնականում արտահայտվում են ռուսական ռուբլով (ռուբլի), ԱՄՆ դոլարով և եվրոյով: Ստացված եկամտի զգալի մասն արտահայտված է Բիզնեսի ֆունկցիոնալ արժույթով (<< դրամով): Հնարավորության դեպքում, գործառնական գործունեությանը վերաբերող վճարումները կատարվում են այն արժույթով, որով արտահայտված է Բիզնեսի մատուցված ծառայություններից ստացվող եկամուտը:

Փոխառությունների գծով տոկոսներն արտահայտված են փոխառության արտարժույթով:

Բիզնեսի քաղաքականության համաձայն պետք է ապահովվի արտարժույթով արտահայտված այլ դրամային ակտիվների և պարտավորությունների հետ կապված ռիսկի ընդունելի մակարդակ:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Բիզնեսի ենթարկվածությունն՝ ըստ անվանական գումարների:

հազ. դրամ	Ռուբլով արտահայտված	Այլ արտարժույթով արտահայտված	Ռուբլով արտահայտված	Այլ արտարժույթով արտահայտված
	2021թ.	2021թ.	2020թ.	2020թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	380,310	36,889	413,055	81,544
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,383	131,693	2,605	38,966
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(677)	(185,027)	-	(115,702)
Զուտ ենթարկվածություն	382,016	(16,445)	415,660	4,808

Տարվա ընթացքում կիրառվել արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

<< դրամով	Միջին փոխարժեք		Սփյուռ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
1 ԱՄՆ դոլար	503.81	489.20	480.14	522.59
1 եվրո	596.65	558.39	542.61	641.11
1 ռուբլի	6.84	6.8	6.42	7.02

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում առաջացող ռիսկերը նվազեցնելու նպատակով Բիզնեսը վերցնում է ֆիքսված տոկոսադրույքով վարկեր: Թեև Բիզնեսը չունի այս հարցերը կարգավորող մշակված քաղաքականություն, կիրառվող մոտեցումը թույլ է տալիս որոշ չափով կառավարել տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում առաջացող ռիսկերը: Հաշվետու տարվա ընթացքում Բիզնեսը փոխառություններ չի վերցրել:

Ֆիքսված դրույքով գործիքների իրական արժեքի գգայնության վերլուծություն

Բիզնեսը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի, կամ սեփական կապիտալի վրա:

(գ) Կապիտալի կառավարում

Բիզնեսի քաղաքականությունը պահանջում է ապահովել կապիտալի կայուն բազա, ինչը թույլ կտա պահպանել ներդրողների, կրեդիտորների և շուկայի վստահությունը և կնպաստի գործունեության հետագա զարգացմանը: Տնօրենը վերահսկում է կապիտալի հատուցումը, որը, ըստ Բիզնեսի սահմանման, իրենից ներկայացնում է գործառնական գործունեության արդյունքը բաժանած ընդհանուր բաժնետիրական կապիտալի:

Բիզնեսը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Բիզնեսի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկային մասնակիցների վստահությունը պահպանելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Բիզնեսի հասույթի և շահույթի շարունակական վերահսկման և հիմնականում Բիզնեսի գործառնական գործունեության դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Բիզնեսը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Բիզնեսի մոտեցումը չի փոփոխվել: Բիզնեսի նկատմամբ չեն կիրառվում կապիտալին վերաբերող արտաքին պահանջներ:

17. Վարձակալություն

(ա) Վարձակալության պայմանագրեր, որտեղ Բիզնեսը հանդես է գալիս որպես վարձակալ

Պայմանագրի սկզբում Բիզնեսը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Բիզնեսն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը: Այս քաղաքականությունը կիրառելի է 2019թ. հունվարի 1-ին կամ հետո կնքված պայմանագրերի համար:

(i) Բիզնեսը՝ որպես վարձակալ

Բիզնեսը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բիզնեսը չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բիզնեսը կիրառորձի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ գեղջված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բիզնեսի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բիզնեսը որպես գեղջման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Բիզնեսը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխում վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բիզնեսը խելամտորեն համոզված է, որ կիրառորձի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բիզնեսը խելամտորեն համոզված է, որ կիրառորձի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բիզնեսը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Բիզնեսի գնահատականի փոփոխություն, եթե Բիզնեսը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորություններն Բիզնեսը ներկայացնում է առանձին՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բիզնեսը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Բիզնեսը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ փոփոխում վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, օրինակ՝ չեն արտացոլում շուկայական դրույքների փոփոխությունները, չափաք է ներառվել վարձակալության գծով պարտավորության չափման մեջ:

(ii) Բիզնեսը՝ որպես վարձատու

Բիզնեսը չունի վարձակալության և ենթավարձակալության պայմանագրեր:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

2020թ. հազ. դրամ	Հիմնական միջոցներ
Մնացորդը առ 1 հունվարի	136,396
Տարվա մաշվածության գումար	(35,581)
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	100,815

2021թ. հազ. դրամ	Հիմնական միջոցներ
Մնացորդը առ 1 հունվարի	100,815
Տարվա մաշվածության գումար	(35,582)
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	65,233

23,193 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը հաշվառվել է ուղղակի գործառնական ծախսերում, իսկ 12,389 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը՝ վարչական ծախսերում:

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	հազ. դրամ
2020թ. – Վարձակալություն	
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսներ	15,092
Տարվա մաշվածության գումար	35,581

2021թ. – Վարձակալություն	
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսներ	11,211
Տարվա մաշվածության գումար	35,582